**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N «ՄԱՏ-ՄԱԾՁԲ-21/26-Հ1»**
**02.06.2026Թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՄԱՏ-ՄԱԾՁԲ-21/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «13» «հունիս» 2026թ.

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամը՝ ի դեմս տնօրեն Արա Խզմալյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Բադալյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2026 թվականի հունիսի 2-ին կնքված N ՄԱՏ-ՄԱԾՁԲ-21/26 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով 12.06.2026թ. «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊԸ-ի կողմից ստացված գրությունը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրի ծառայության մատուցման ժամկետը երկարաձգել մինչև 2026 թվականի հուլիսի 20-ը:

1.2 Հաստատել Պայմանագրի հավելված 2-ը՝ «Ծառայության մատուցման ժամանակացույցը», նոր խմբագրությամբ համաձայն՝ սույն Համաձայնագրի հավելված N 1-ի :

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն և պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի
անվան հին ձեռագրերի գիտահետազետական
ինստիտուտ» Հիմնադրամ
ք. Երևան, Մաշտոցի պող. 53
ՀՎՀՀ 01503576
ՀԷԲ Մյասնիկյան մ/ճ Հ/Հ 163038100547

**Ա. Խզմալյան** ____________________
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան 0010, 8 Վարդանանց փող. փակուղի,
«Վարդանանց» բիզնես կենտրոն
ՀՎՀՀ 02835031
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022591611001

**Ռ. Բադալյան** ____________________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1

« 13 » «հունիսի» 2026թ. կնքված

**N «ՄԱՏ-ՄԱԾՁԲ-21/26-Հ1»** ծածկագրով համաձայնագրի

Հավելված N 2

«02» «հունիսի» 2026թ կնքված

**N «ՄԱՏ-ՄԱԾՁԲ-21/26»** ծածկագրով պայմանագրի

# ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | | |
| | | | | | | հասցեն | ժամկետը | |
| 1 | 79211150 /աուդիտորական ծառայություններ/ | «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի ՝ 2025 թվականի ՖՀՄՍ համապատասխան պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացման ծառայություն<br>**1. Աուդիտի խնդիրները**<br>Աուդիտորական ընթացակարգերը ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով, որոնք պետք է իրականացվեն Աուդիտի Միջազգային Ստանդարտների համաձայն՝<br>▪ Հիմնադրամի կազմակերպչական կառուցվածքի ուսումնասիրություն.<br>▪ Հիմնադրամի հիմնադիր փաստաթղթերի ուսումնասիրություն և ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ստուգում.<br>▪ Հաշվապահական հաշվառման դրվածքի և հաշվային քաղաքականության ուսումնասիրում.<br>▪ Հաշվային պլանի կիրառման և հաշվապահական հաշվարկների ձևակերպումների ուսումնասիրում և ճշտության ստուգում.<br>▪ Սկզբնական հաշվառման և ծախսային փաստաթղթերի, աշխատանքային, ծառայությունների մատուցման, ձեռքբերումների գծով պայմանագրերի լրացման, կազմման, պայմանագրերի դրույթներին համապատասխան կատարման, հաշվապահական և վերլուծական հաշվառման տվյալների գրանցման համապատասխանության ստուգում.<br>▪ Ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցներ, անավարտ ոչ | դրամ | 840000 | 1 | ք. Երևան, Մաշտոցի 53 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 20.07.2026թ. | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընթացիկ ակտիվներ, ոչ նյութական ակտիվներ) և ընթացիկ ակտիվների (հումք, նյութեր, անավարտ արտադրանք, պատրաստի արտադրանք, և այլ պաշարներ) հաշվառման դրվածքի ուսումնասիրում.<br>▪ Ապրանքանյութական արժեքների հաշվառման դրվածքի ճշտության, հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռք բերման, օտարման, լուծարման, սկզբնական հաշվառման փաստաթղթերի կազմման, լրացման և անալիտիկ գրանցամատյանների, քարտերի հաշվառման ճշտության ստուգում.<br>▪ Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների մաշվածության հաշվարկների ճշտության ստուգում, ապրանքանյութական արժեքների ձեռքբերումների, ելքագրումների, դրանց ծախսագրման հաշվառման ճշտության և ՀՀ օրենսդրության հետ համապատասխանության ստուգում.<br>▪ Հիմնադրամի կողմից կամ Հիմնադրամի համար "Գնումների մասին" ՀՀ օրենքի շրջանակներում կազմակերպված գնումների փաստաթղթերի գնահատում և առաջարկությունների ներկայացում.<br>▪ Բանկային և դրամարկղային գործառնությունների վերլուծություն.<br>▪ Ֆինանսական, գործառնական վարձակալությունների գործընթացի ուսումնասիրում համապատասխան ՀՀ գործող օրենսդրության պահանջներին.<br>▪ Կարճաժամկետ, երկարաժամկետ պարտավորությունների, բյուջեի և այլ կրեդիտորների հետ փոխհարաբերությունների ստուգում.<br>▪ Առկա դեբիտորական, կրեդիտորական պարտքերի մեջ անհուսալի և ժամկետանց պարտքերի վերլուծություն և ուսումնասիրություն.<br>▪ Ակտիվների և պարտավորությունների գույքագրման արդյունքների ստուգում.<br>▪ Առ 31.12.2025թ. դրությամբ մատակարարների և պատվիրատուների հետ առկա փոխադարձ հաշվարկների ստուգման ակտերի ուսումնասիրում.<br>▪ Կադրերի և աշխատանքի վարձատրության ոլորտում աշխատակիցների հետ կնքված պայմանագրերի, աշխատանքի ընդունման, տեղափոխման, ազատման հրամանների, աշխատանքային պայմանագրերի առկայության ստուգում, դրանց կազմման և ձևակերպման ճշտության ուսումնասիրում.<br>▪ Աշխատանքի վարձատրության մեթոդիկայի ուսումնասիրում.<br>▪ Հիմնադրամի եկամուտների, ծախսերի, կառավարչական հաշվառման և արտահաշվեկշռային հաշիվների, շրջանառության ծավալների, ֆինանսական արդյունքների հաշվառման ճշտության ստուգում.<br>▪ Վերոհիշյալ ուսումնասիրությունների հիման վրա առկա հաշվապահական հաշվառման գծով թերությունների և բացթողումների, ինչպես նաև հաշվապահական հաշվառման և հարկային | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | օրենսդրության հետ անհամապատասխանությունների և շեղումների, փոխկապակցված անձանց հետ գործարքների, շահերի բախման փաստերի հայտնաբերում և ներկայացում.<br>▪ Առաջարկությունների ներկայացում վերոհիշյալ աշխատանքների արդյունքում բացահայտված բացթողումների և թերությունների գծով:<br>Աուդիտն իրականացնելուց հետո կատարողի կողմից պետք է ներկայացվի աուդիտորական եզրակացություն (երեք օրինակ՝ հայերեն և անգլերեն), նամակ ղեկավարությանը (երկու օրինակ՝ հայերեն և անգլերեն), ինչպես նաև ծառայությունների մատուցումը հիմնավորող փաստաթուղթ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» Հիմնադրամ
ք. Երևան, Մաշտոցի պող. 53
ՀՎՀՀ 01503576
ՀԷԲ Մյասնիկյան մ/ճ, Հ/Հ 163038100547

**Ա. Խզմալյան** ____________ (ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան 0010, 8 Վարդանանց փող. փակուղի, «Վարդանանց» բիզնես կենտրոն
ՀՎՀՀ 02835031
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022591611001

**Ռ. Բադալյան** ____________ (ստորագրություն)
Կ.Տ.